դեռ հեռուից ինձ էր մեկնում իր քարտը: Նա էլ ներս մտաւ. եւ հազիւ էր իր կապոցը ցած դրել, որ նորից դուռը բաղխեցին: Եւ այսպէս շարունակաբար: Մէկ այցելուի ետեւից փակւում էր դուռը իսկոյն յաջորդի առաջ բացւելու համար:

Շուտով սենեակս լցւեց վաճառականներով, իսկ սենեակիս յատակը նրանց մանրիկ ապրանքներովը: Ի պատիւ նրանց պէտք է ասեմ, որ նրանք չէին աշխատում ապրանքը անպատճառ վզիս փաթաթել: Ցոյց տալով ինձ իրանց արկղիկները, թողնելով մօտս իրանց քարտերը, նրանք մէկը միւսի ետեւից չքացան սենեակիցս, անձայն ու հանդարտ, ինչպէս որ եկել էին:

⁂

Առաւօտը վաղ պարտք համարեցի իմ նախորդ երեկոյեան այցելուներիս վիզիտը վերադարձնելու: Արդէն ինձ շատ էին հետաքրքրել նրանց սիրուն մինիօն իրերը:

Խանութում ճապոնացին պատկառանքով դիմաւորում էր ինձ ժպիտն երեսին ու խնդրում, որ սանդուխով բարձրանամ վերեւ: Այնտեղ ցուցադրւած էին նրա ապրանքները:

Շատ գեղեցիկ կտորներ կային դրանց մէջ, մետաքսով, ու ոսկէ թելով բանած, փափուկ ու նուրբ, գոյներն էլ չափազանց մեղմ ու քնքոյշ, իսկ գործւածքը ուղղակի հրաշալի:

Ինձ մի մեծ անկողնի ծածկոց ցոյց տւին, որի վրա ասեղնագործած էր ծով: Այնտեղ ալիքների ծոցում բարձրանում էր միայնակ ժայռը, որի վրա փառահեղ բազմած էր արծիւը: Ի՜սկ որ գեղարւեստական մի ստեղծագործութիւն էր դա. հեռուից հնար չկար ենթադրելու, որ դա ոչ թէ նկարւած, այլ ասեղնագործած է: